

Ժողովներ, թեև ի կամ սրտենքի, դէպի արտերը ոտք փորձելու, զիրենք մօտիկը դնելու գնով վաւերական անդամալոյծներուն.- պղտոր ու խայտաբղէտ դասակարգ, գեղին գիտութեան մէջ ճշմարիտ խորհուրդ, շատ շուտ «զարնուած» երկնաւորէն, յայտ ու անյայտ մեղքերու իբր նախապատիժ, ճուալով ցաւէն, ցաւերէն, ասոնք ալ յայտ.- անոնք, յամառ ու խարդախ, օր մը յօղ-լածներուն, օր մը մէջքի խաղերուն ուղիով, ուրիշ օր մը սրտին դռներուն, բոլորն ալ հաշտ իրենց խորհուրդին, այսինքն՝ չէնք շնորհք տեղաւորուած, ենթակային այս ու այն արարքը նախաքաւող յիմար ու ճամբորդ, ա'լ հաստատուած անոնց խարշամ միսերուն, ծակոտկէն ոսկորներուն ներսը, երբեմն որդի փոխուելով, աւելի շատ ձմեռ մը լման անկողին ըլլալով, ցից-ցից կրծելով քիթին դռները, երեսին մէկ կալը, կամ վիզին վրայ, ուռեցք-ուռեցք նստելով ու փտելով՝ ինչպէս փտեցնելով, դեռ խրամ շինած գոմշու սատակները տարօրէն թելադրելով...: Ծերերը այդ գեղին, մալարիայէն մագաղաթ-լած իրենց մարմնեղէն տապանակը, իրենց փայտերուն վրայ բեռնաւորած, կը շարժուէին աջ ու ձախ, թթու ու աշխած, աղբ ու շէռ հոսող իրենց երկար վարտիքներուն ներքին աւերակը երբեմն ծոցուոր կնիկի մը պէս ուռեցուցած կրելով...: Կը զարնէին համեմատաբար նուազ տարւոքներ, իրենց ցուպերը, սալերուն, սաքուններուն, սունտերուն, կոճերուն, իրենց գնացքը ոչ թէ հանդիսաւորելու, այլ՝ մարդերը ողորդելու, ծերերուն հանդէպ պակսող արգահատանքը սեւեռելու մատաղներու մտքին, ու կը մտնէին կարգաւ այդ երանելի սրճարանը, որուն մուտքը իրենց տարիքը կը բանար իրենց, երբ քանի մը զաւակ, բանակ մը թոռ ունէին իրենց պահանջի կողմէն, կը բոլորէին գիւղապետը, բաղդատաբար առոյգ, որովհետեւ տարիքէն շատ խոնարհ, բայց վաղահասօրէն ճերմկած, ու կը լռէին՝ անոր լռելուն, ու կը հագային՝ անոր հագալուն, ու կը խօսէին՝ անոր խօսելուն: Եւ կամ կը բանային դժուար ու դողդոջ իրենց բերանները, յօ-